ՀՈԳԵՎԻՃԱԿԱՅԻՆ ԲԱՅԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

ՀՄԱՅԱԿ ՕՀԱՆՅԱՆ

Ժամանակակից հայերենի բայերի կազմում հատուկ տեղ են գրավում հոգեվիճակային բայերը, որոնց ցույց տված գործողությունը կապվում կամ առնչվում է մարդու հոգեկան աշխարհի հետ։ Այդ բայերն արտահայտում են բանական էակի՝ մարդու հոգեկան զանազան վիճակների դրսևորումները՝ հանդես գալով որպես դրանց արտահայտման բառային միավորներ, և իբրև այդպիսիք, իրենց մեջ կրում են հոգեկան զանազան վիճակների իմաստներ։ Այլ կերպ ասած՝ հոգեվիճակային բայերը ցույց են տալիս մարդու հոգեկան աշխարհի տարբեր վիճակներն ու դրանց դրսևորումները։

Հոգեվիճակային բայերի քանակը հասնում է 150-ի։ Դրանք հետաքրքրական են հատկապես իրենց դրսևորած նշանակությունների և խնդիրների ձևավորման տեսակետից[1]*։ Հոգեվիճակային բայերի դասակարգումն ըստ նշանակության զգալի դժվարություն է հարուցում, քանի որ դրանց իմաստային դաշտերը բավական շատ են և խստորեն սահմանազատված չեն միմյանցից, ուստի և հնարավոր են որոշ տեղափոխություններ դրանց միջև, մի բան, որ ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ միշտ չէ, որ հնարավոր է պահպանել բաժանման անդամների՝ միմյանց բացառելու օրենքը։ Բացի այդ, բայերի մի մասը բազմիմաստ է, որը և հնարավորություն է ընձեռում նրանց՝ մեկ իմաստով ընդգրկվելու մի խմբի մեջ, մեկ ուրիշ իմաստով՝ մեկ այլ խմբի։ Սակայն դրանք մեծ քանակ չեն կազմում և, որ կարևոր է, պահպանում են իրենց առանձնահատկությունը՝ մասամբ միայն խոչընդոտելով ընդհանուր խնդրի լուսաբանմանը։ Չնայած նշված օբյեկտիվ դժվարություններին, այնուամենայնիվ, հոգեվիճակային բայերը կարելի է խմբավորել ըստ դրսևորած իմաստների։ Ըստ նշանակության, հոգեվիճակային բայերի կազմում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ենթախմբերը.*

1. Բայեր, որոնք արտահայտում են վախ, երկյուղ՝ վախել, վախենալ, սարսափել, ահաբեկվել, երկյուղել, երկյուղ կրել, վեհերոտել, սահմռկել, սարսել, սոսկալ զարհուրել, զարզանդվել, սրտապնդվել, վախ զգալ, սարսափ զգալ և այլն։

2. Բայեր, որոնք արտահայտում են բարկություն, վրդովմունք, հուզմունք՝ բարկանալ, ջղայնանալ, զայրանալ, գազազել, կատաղել, նյարդայնանալ, ներվայնանալ, չարանալ, նեղանալ, գրգռվել, բորբոքվել, սրտմտել, հուզվել, վրդովվել և այլն։

3. Բայեր, որոնք արտահայտում են ուրախություն, ծիծաղ և այլն՝ ուրախանալ, ցնծալ, բերկրել, ծիծաղել, ժպտալ, հռհռալ, քրքջալ, խնդալ, չարախընդալ, հրճվել, երջանկանալ և այլն։

4. Բայեր, որոնք արտահայտում են տխրություն, վիշտ, հուսահատություն, տանջանք և այլն՝ տխրել, թախծել, վշտանալ, տրտմել, մռայլվել, տագնապել, տանջվել, տառապել, տվայտել, մտատանջվել, վհատվել, հուսահատվել, անհանգստանալ և այլն։

---

[1] *Հոդվածում հոգեվիճակային բայերը դասակարգվում են միայն ըստ իմաստների և ըստ խնդիրների ձևավորման։*

5. Բայեր, որոնք արտահայտում են հափշտակություն, կախարդանք, գայթակղություն, ոգևորություն, նեբշնչանք և այլն՝ հափշտակվել, կախարդվել, գերվել, հմայվել, հրապուրվել, զմայլվել, գայթակղվել, դյութվել, կլանվել, ներշնչվել, ոգևորվել, ոգեշնչվել, քաջալերվել, խանդավառվել, խրախուսվել և այլն։

6. Բայեր, որոնք արտահայտում են վարանում, շփոթմունք, ափսոսանք՝ վարանել, երկմտել, տարակուսել, տատամսել, շփոթվել, շշկլել, շշկլվել, շվարել, մոլորվել, զղջալ, ափսոսել և այլն։

7. Բայեր, որոնք արտահայտում են հոգեկան խանգարում, անբնական վիճակ՝ խելագարվել, ցնորվել, խենթանալ, գժվել, զառանցել, հիմարանալ, ուշաթափվել, ուշաբերվել, սթափվել, նվաղել, զվարթանալ, գինովանալ, խելքը թռցնել և այլն։

8. Բայեր, որոնք արտահայտում են լաց, կոծ, հառաչանք՝ լալ, լաց լինել, լացակումել, արտասվել, հառաչել, հեկեկալ, հեծկլտալ, հեծել, հեծեծել, սգալ, սուգ անել, կոծել, լաց ու կոծ անել, ախ ու վախ անել, ողբալ, կսկծալ, մորմոքել, մղկտալ և այլն։

9. Բայեր, որոնք արտահայտում են զարմանք, կարկամություն՝ զարմանալ, ապշել, կարկամել, պապանձվել, լալկել, լալկվել, սսկվել և այլն;

10. Բայեր, որոնք արտահայտում են հպարտություն, պարծանք, հիացմունք՝ հպարտանալ, գոռոզանալ, խրոխտանալ, մեծամտանալ, մեծամտել, հիանալ, սքանչանալ, պարծենալ և այլն։

11. Բայեր, որոնք արտահայտում են զզվանք՝ զզվել, գարշել, խորշել, նողկալ և այլն։

Հոգեվիճակային բայերը թեև ըստ լրացումների ձևավորման առանձին խմբերի չեն բաժանվում, քանի որ բոլոր բայերի լրացումներն էլ կարող են ձևավորվել (իհարկե, ոչ միևնույն չափով) թե՛ հոլովաձևերով, թե՛ կապի ու կապվող բառի զուգորդմամբ, սակայն եթե մի շարք բայերի համար առավել բնորոշ ու սովորական են հոլովական լրացումները, ապա բազմաթիվ բայերի համար առավել հատկանշականը կապային խնդրառությունն է։ Վերջապես կան այնպիսի բայեր, որոնց լրացումները հավասարապես կարող են դրսևորվել թե՛ հոլովաձևերով, թե՛ կապով ու կապվող բառով։ Այդ առումով հոգեվիճակային բայերի կազմում կարելի է առանձնացնել երեք խումբ. ա) Բայեր, որոնց համար առավել բնորոշ է հոլովական խնդրառությունը (որոշ դեպքերում սրանց լրացումները կարող են ստանալ նաև կապային ձևավորում)։ բ) Բայեր, որոնց լրացումները մեծ մասամբ ձևավորվում են կապի ու կապվող բառի զուգորդմամբ (չի բացառվում նաև սրանց հոլովական խնդրառությունը)։ գ) Բայեր, որոնց լրացումները հավասարապես կարող են ձևավորվել թե՛ հոլովաձևերով և թե՛ կապի ու կապվող բառի զուգորդմամբ։ Բայերի այս խմբավորումը որոշ չափով պայմանական է, քանի որ լրացումների ձևավորման մեջ նկատի է առնվել բայերի առավել բնորոշ խնդրառությունը՝ անտեսելով ոչ հատկանշական կիրառությունը։ Այդ պատճառով էլ կարող են առարկություններ լինել առանձին բայերի՝ այս կամ այն խմբի մեջ. տեղադրելու վերաբերյալ։ Այդ կապակցությամբ նշենք հետևյալը։ Եթե տվյալ բայի համար առավել բնորոշ է հոլովական խնդրառությունը, ապա այն մտցվում է հոլովական խնդրառություն ցուցաբերող բայերի շարքը, թեև այն կարող է երբեմն ստանալ նաև կապային լրացում։ Իսկ այն բայերը, որոնց լրացումները մեծ մասամբ ձևավորվում են կապերով, մտցվում են կապային խնդրառություն ունեցող բայերի կազմի մեջ, թեև դրանք կարող են նաև հոլովաձևերով արտահայտված լրացում ստանալ (իհարկե, ոչ կապի ու կապվող բառի զուգորդմամբ դրսևորված լրացումների չափ)։ Կարճ ասած՝ այս խմբավորումը բացարձակ չէ, այն որոշ չափով պայմանական է։

Հոլովական ձևավորում ունեցող լրացում են պահանջում հոգեվիճակային բայերի մի զգալի մասը, հատկապես հետևյալները՝ ահաբեկվել, գոռոզանալ, գայթակղվել, գերվել, գարշել, գոհանալ, գինովանալ, դժգոհել, երկյուղել, երկընչել, զզվել, զմայլվել, կարհուրել, զարթնել, զգաստանալ, ընկճվել, խորշել,

խռովվել, խրախուսվել, խենթանալ, խոցվել, կլանվել, կախարդվել և այլն։ Կապային խնդրառություն ցուցաբերող բայերն անհամեմատ քիչ են։ Այդպիսիք են՝ բարկանալ, գազազել, զայրանալ, ընդվզել, ըմբոստանալ, լարվել, խոժոռվել, կատաղել, հանդգնել, շարանալ, ջղայնանալ, տատանվել և այլն։ Զգալի թիվ են կազմում այն բայերը, որոնց լրացումները կարող են ձևավորվել և՛ հոլովաձևերով, և՛ կապի ու կապվող բառի զուգորդմամբ։ Այդպիսիք են՝ ամաչել, ապշել, արտասվել, գժվել, գրգռվել, զարմանալ, թախծել, լալ (լաց լինել), խելագարվել և այլն։ Հարկ է նկատել, որ այս խմբի բայերի մի զգալի մասը կարելի է տարբալուծել մյուս երկու խմբերի մեջ, քանի որ մի քանի բայեր ավելի շատ հոլովական, քան կապային խնդրառություն են ցուցաբերում, իսկ որոշ բայերի էլ ավելի շատ հատկանշական է կապային, քան հոլովական խնդրառությունը։ Ստույգ վիճակագրության դեպքում, անշուշտ, մի շարք բայեր այս խմբից կանցնեն մյուսների մեջ։ Սակայն անկախ այն բանից, թե որ խմբի մեջ է ընդգրկվել այս կամ այն բայը, ուսումնասիրության ընթացքում վեր են հանվում նրա խնդրառական (և ոչ միայն խնդրառական) առանձնահատկություններն ու յուրահատկությունները, մի բան, որ սույն հոդվածի բուն նպատակներից մեկն է։ Այսպես՝ երկնչել բայը մտցվել է հոլովական լրացումներ պահանջող բայերի շարքը, որը նրա հիմնական կիրառությունն է։ Երկնչել բայի լրացումները, իրոք, մեծ մասամբ ձևավորվում են բացառականով. օրինակ՝ «Զերկնչեք այս ավազակներից» (ՍԽ, ՄՍ, էջ 353)։ «Մի՛ երկնչեք այս լեռների վայրենի տեսքից» (նույն տեղում, էջ 412)։ Սակայն երբեմն նշված բայի լրացումը դրսևորվում է կապի ու կապվող բառի զուգորդմամբ. ինչպես՝ «Քաջալերող խոսքերով արիացրե՛ք ձեզ ու ձեր գնդերը և բնավ մի երկնչեք թշնամու առջև» (ՍԽ, ՄՍ, էջ 438)։ Այս խնդրառությունը այնքան էլ բնորոշ չէ երկնչել բային։ Վերջինիս համար առավել հատկանշական է հոլովական լրացում ստանալը, ուստի երկնչել բայը դասվել է հոլովական խընդրառություն ցուցաբերողների շարքը, իհարկե, համապատասխան տեղում տրվում են լրացուցիչ բացատրություններ։ Նույն ձևով էլ բացառական հոլովով լրացում է պահանջում վախենալ բայը, ինչպես՝ վախենալ մեկից (մի բանից)։ Սակայն երկնչել-ի նման նրա լրացումը ևս կարող է կապային ձևավորում ստանալ (վախենալ մեկի (մի բանի) համար)։ Այս խնդրառությունը հոլովականի չափ հատկանշական չէ վախենալ բայի համար։

Հոգեվիճակային բայերի լրացումների ձևավորման մեջ ակտիվություն են հանդես բերում հատկապես բացառական և գործիական հոլովները, որոնց համեմատությամբ բավականին պասիվ են տրականը, հայցականը և ներգոյականը։ Հայցական հոլովի պասիվությունը պայմանավորված է նշված բայախմբի մեջ ներգործականների քանակական սահմանափակությամբ, ներգոյականինը՝ այդ հոլովի առանձնահատկությամբ, իսկ տրականինը՝ այդ բայերի դրսևորած գործողության բնույթով ու նշանակությամբ։ Հոլովական խնդրառություն ունեցող բայերի մի զգալի մասը պահանջում է բացառական հոլովով ձևավորված լրացումներ։ Բացառականով լրացում ստացող բայերը իմաստային տեսակետից միատարր չեն և արտահայտում են բազմապիսի նշանակություններ։ Բացառական հոլովով լրացում են ստանում. ա) վախ արտահայտող բայերն առանց խտրության. ինչպես՝ ահաբեկվել, երկյուղել, երկյուղ զգալ, երկյուղ կրել, երկնչել, զարհուրել, զարզանդվել, սահմռկել, սարսել, սոսկալ, սարսափել, սարսափ զգալ, սրտապնդվել, վախենալ, վախ զգալ և այլն։ բ) Զզվանք, ձանձրույթ, ամոթ, շփոթմունք, ցնծություն և այլ նշանակություն արտահայտող բայերը, ինչպես ամաչել, գարշել, զզվել, խորշել, ձանձրանալ, մոլորվել, շշկլվել, շվարել, շփոթվել, ցնծալ և այլ բայեր։

Բացառականով ձևավորված լրացումներն արտահայտում են տարբեր հարաբերություններ, հատկապես պատճառի, պասիվ (երբեմն էլ ակտիվ) ներգործության, անջատման, հետևանքի և այլն՝ նայած նախադասության կառուցվածքին, լրացումների բնույթին, հաղորդման նպատակաուղղվածությանը և լեզվական ու արտալեզվական այլևայլ գործոնների։ Լրացումները հաճախ

համատեղում են մեկից ավելի իմաստներ, և հնարավոր չէ առանձնացնել գերիշխողը մյուսներից։ Մեծ մասամբ համատեղվում են պատճառի ու ներգործության իմաստները, և դժվարություն է հարուցում դրանց սահմանազատումը։ Եթե բացառականով ձևավորված անդամը անձ ցույց տվող բառ է, ապա հիմնականում ներգործության հարաբերություն է դրսևորվում, իսկ եթե իր է, արտահայտվում է պատճառականություն, ուր որոշ չափով կարող է համատեղվել պասիվ ներգործության հարաբերություն։ Այսպես՝ ձանձրանալ հարևանից (բոլորից, ամենքից) կապակցությունների մեջ իշխում է ներգործության իմաստը։ Հարևանը (բոլորը, ամենքը) ձանձրացնում են, իսկ ձանձրանալ մենակությունից (սիրալիրությունից, սրտաբացությունից) կապակցություններում գերիշխում է պատճառականությունը (մենակությունը, սիրալիրությունը, սրտաբացությունը պատճառ են դառնում ձանձրանալու համար)։ Այստեղ, իհարկե, ոչ շեշտված ձևով, աղոտ կերպով զգացվում է նաև ներգործության հարաբերություն։

գ) Բացառականով ձևավորված լրացում են պահանջում նաև լլկանք, հիասթափություն, վիրավորանք, սթափություն և այլ իմաստ արտահայտող լալկվել, լլկվել, լացակումել, հեծկլտալ, հիասթափվել, նեղանալ, խռովել, վիրավորվել, սթափվել, զարթնել, արթնանալ, ուշքի գալ և այլ բայեր։

Հոլովական խնդրառություն ունեցող բայերի մի մասն էլ պահանջում է գործիական հոլովով ձևավորված լրացումներ։ Գործիականը բացառականի նման ակտիվություն է հանդես բերում հոգեվիճակային բայերի լրացումների ձևավորման մեջ։ Գործիական հոլովով ձևավորված լրացումներ են պահանջում. ա) հպարտություն, պարծանք, հիացմունք և այլ իմաստ արտահայտող գոռոզանալ, հպարտանալ, խրոխտանալ, պարծենալ, հիանալ, սքանչանալ և այլ բայեր։ բ) Գայթակղություն, կախարդանք, հափշտակություն և այլ նշանակություն արտահայտող գայթակղվել, գերվել (փոխ.), դյութվել, զմայլվել, կախարդվել, կլանվել, հափշտակվել, հրապուրվել, գրավվել (փոխ.), տարվել (փոխ.) և այլ բայեր։ Իբրև լրացում կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառեր։ Ընդ որում, կախարդվել և գերվել բայերի լրացումներն ավելի շատ անձ են ցույց տալիս, քան իր, իսկ տարվել, կլանվել բայերի լրացման դերով ավելի շատ իր ցույց տվող բառեր են կիրառվում, քան անձ մատնանշող։ գ) Գործիական հոլովով արտահայտված լրացում են պահանջում զվարճանք, երջանկություն, ընկճվածություն, ոգևորություն, մխիթարանք և այլ իմաստ արտահայտող զվարճանալ, երջանկանալ, ընկճվել, մխիթարվել, ոգևորվել, ոգեշնչվել, ներշնչվել և այլ բայեր։

Որոշ բայեր կարող են ստանալ մեկից ավելի հոլովներով արտահայտված լրացումներ՝ դրսևորելով համապատասխան իմաստներ։ Ընդ որում, այդ բայերի լրացումների ձևավորման մեջ հաճախ իշխում է միայն մեկ հոլովաձևը, մյուսն այնքան էլ բնորոշ չի լինում, թեև այն ևս որոշ մասնակցություն է հանդես բերում տվյալ լրացման ձևավորման մեջ։ Մի քանի բայերի լրացումները, սակայն, հավասարապես դրսևորվում են մեկից ավելի հոլովներով, որոնք բնորոշ են ու տիպական տվյալ բայերի լրացումների արտահայտման համար։ Մեկից ավելի հոլովներով արտահայտված խնդրառությունը բնորոշ է հատկապես գոհանալ, հմայվել, արբել, հարբել, արբենալ, գինովանալ, զգաստանալ և այլ բայերի։ Ընդ որում, նշված բայերի լրացումը մերթ արտահայտվում է բացառականով, մերթ գործիականով, իշխողը հիմնականում գործիականն է, իսկ բացառականը գործիականի չափ բնորոշ ու տիպական չէ։ Նկատենք նաև, որ գործիականով դրսևորվում է միջոցի ու ներգործության, բացառականով՝ անջատման ու ներգործության կամ էլ պատճառական հարաբերություններ։ Այսպես՝ գոհանալ բայի լրացումը սովորաբար դրսևորվում է գործիականով. օրինակ՝ «Չէր կարող գոհանալ միայն լուսնի և աստղերի կենդանացումով» (ՊՍ, եԺ, 5, էջ 158)։ «Որ բանվորը գոհանա իր վաստակով» (ՊՍ, եԺ, 1, էջ 75)։ Այստեղ գործիական հոլովով միջոցի խնդրի հարաբերություն է արտահայտվում, որը համատեղում է նաև պատճառական և ներգործության հարաբերություններ։ Հիշյալ բայերի լրացումը կարող է ձևավորվել նաև բացառական հոլովով՝ դրսևորելով

մերթ անջատման, մերթ պասիվ ներգործության և այլ նշանակություններ. այսպես՝ Ուր որ է կարթնանա, կերգի, կաղմկի՝ զոհացած աշխարհից» (ՀՍ, Եժ, էջ 171)։

Հմայվել բայի՝ գործիական հոլովով ձևավորված լրացումը մեծ մասամբ սրտահայտում է միջոցի հարաբերություն, ուր երբեմն որոշ չափով համատեղվում է նաև ներգործության նշանակություն. օրինակ՝ «Հմայված է իմ հոգին Աղոթաձայն քո խոսքով» (ՍԿ, 3Կ, էջ 456)։ Հմայվել բայի լրացումը, երբ ձևավորվում է բացառական հոլովաձևով, դրսևորում է անջատման, ելման, ներգործության, պատճառի և այլ հարաբերություններ. այսպես՝ «Փառանձեմը, նրա ուժից ու կարողությունից հմայված ակամա ձգվեց դեպի իրեն սպասող, իրեն կանչող ձեռքը (ՊՁ, Ամ, էջ 338)։ Այստեղ ուժից, կարողությունից հոլովաձևերով հիմնականում դրսևորվում է ներգործության ու պատճառի հարաբերություն՝ անջատման, ելման նշանակության համատեղումով, այսինքն՝ առաջինը ոչ թե ելման, այլ ներգործության հարաբերությունն է։

Զգաստանալ բայի լրացումը ևս արտահայտվում է թե՛ գործիականով և թե՛ բացառականով. օրինակ՝ «Ալիշանը սկսավ նայել որդուն. ծնողական սիրտը կարծես զգաստացավ մի երկարատև արբեցությունից» (Մուր., Եժ, էջ 325)։ «Եվ գինովցածի մոլոր քայլերով լճափ է նետվում, որ նրա ջրով քիչ զգաստանա» (ՊՍ, Եժ, 4, էջ 207)։ Առաջին օրինակում զգաստացավ բայի լրացումը՝ արբեցությունից անջատման, ելման նշանակություն է արտահայտում, մյուսում՝ (ջրով) միջոցի հարաբերություն։

Արբել, հարբել, հարբենալ բայերի՝ գործիականով արտահայտված լրացումը միջոցի ու ներգործության, իսկ բացառականով արտահայտվածը՝ ներգործության ու պատճառի հարաբերություն է դրսևորում. այսպես՝ «Լեվոնը հարբած էր աշխատանքի հաջողությամբ և այն սիրով ու հարգանքով, որ տածում էր նրա հանդեպ Հացավանը» (ՆՀ, Հ, էջ 381)։ «Խմեմ հարբենամ՝ ինչով դու հարբես» (ՊՍ, Եժ, 1, էջ 241)։ «Հարբած գինուց, վշտից, նա հազիվ իրեն գցեց իր սենյակը» (ՍԽ, ՄԱ, էջ 33)։ «Ներքին մի խռովքով հարցրեց գովեստներից գինովցած, ամեն պատշաճություն կորցրած նախագահը» (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 231)։ Բերված օրինակներից առաջինում՝ Լևոնը հարբած էր աշխատանքի հաջողությամբ... դրսևորվում է թե՛ միջոցի, թե՛ ներգործության հարաբերություն, երկրորդում՝ հարբենամ՝ ինչով դու հարբես ներգործության իմաստ չի արտահայտված, կա միայն միջոցի խնդրի նշանակություն, իսկ վերջին երկուսում հարբած գինուց, վշտից և գովեստներից գինովցած արտահայտվում է թե՛ ներգործության, թե՛ պատճառի նշանակություն (գինին, վիշտը և գովեստները հարբեցնում են, գինովցնում՝ ազդելով ենթակաների վրա և միաժամանակ պատճառ դառնում հարբելու, գինովանալու, այսինքն՝ հարբելն ու գինովությունը առաջ են գալիս վշտի, գինու և գովեստների պատճառով)։

Ինչպես արդեն նշվել է, հոգեվիճակային որոշ բայեր պահանջում են կապի ու կապվող բառի զուգորդմամբ ձևավորված լրացումներ։ Կապային խնդրառություն ունեցող բայերն այնքան էլ շատ չեն։ Հիմք ընդունելով նրանց իմաստները՝ դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի.

ա) բայեր, որոնք արտահայտում են զայրույթ, բարկություն. այդպիսիք են բարկանալ, գազազել, զայրանալ, կատաղել, նյարդայնանալ, չարանալ, ջղայնանալ և այլն։ Նկատենք, որ բարկանալ բայի լրացման կապվող բառի դերում կիրառվում են անձ ցույց տվող բառերը, գազազել բայի լրացումը, երբ վերջինս արտահայտվում է դեմ կապով ու կապվող բառով, ևս անձ է ցույց տալիս։ Զայրանալ բայի լրացումը կարող է թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառ լինել, ընդ որում, եթե լրացումը արտահայտվում է դեմ կապի ու կապվող բառի զուգորդմամբ, ապա կապվող բառը անձ ցույց տվող բառ է լինում, եթե ուրիշ կապերով է արտահայտվում, կարող է դրսևորվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառերով։ Կատաղել-ի լրացման կապվող բառը և՛ անձ կարող է

մատնանշել, և՛ իր, սակայն երբ լրացումը ձևավորվում է դեմ կապով, կապվող բառը ավելի շատ անձ է ցույց տալիս, քան՝ իր։ Վերջապես ջղայնանալ-ի՝ դեմ և վրա կապերով ձևավորված լրացման կապվող բառը մեծ մասամբ անձ է ցույց տալիս, հաղվադեպ նաև՝ իր։ Մեջ, առթիվ և այլ կապերով ձևավորված լրացման կապվող բառը թեև կարող է թե՛ անձ, թե՛ իր ցույց տալ, սակայն գերիշխողը իր ցույց տվող բառերն են, և անձ մատնանշողները համեմատաբար սահմանափակ են։ Բարկանալ բայի լրացումը հիմնականում ձևավորվում է վրա կապով, հաղվադեպ նաև դեմ-ով։ Առաջին դեպքում դրսևորում է հանգման հարաբերություն՝ վերաբերության նշանակության համատեղումով, մյուս դեպքում՝ հանգման հարաբերություն՝ ընդդիմության իմաստի համատեղումով։ Նկատենք, որ դեմ կապով ձևավորված լրացումը այնքան էլ հարազատ չէ գրական լեզվին։

Գազազել բայի կապային լրացումը հիմնականում ձևավորվում է դեմ կապով՝ դրսևորելով հանգման նշանակություն՝ ընդդիմության հարաբերության համատեղումով։ Կապվող բառը մեծ մասամբ անձ է ցույց տալիս. այսպես՝ «Գազազեց մասնավորապես Լիպարիտ Լևոնյանի դեմ» (ՆՋ, 2, էջ 73)։ «Գազգում է ամուսնու դեմ» (ՆՋ, 2, էջ 215)։

Հետաքրքրական է գայրանալ բայի խնդրառությունը՝ իր բազմապիսի դրսևորումներով։ Գայրանալ-ի լրացումը կարող է ձևավորվել թե՛ դեմ, թե՛ վրա, թե՛ համար, թե՛ առթիվ և թե այլ կապերով՝ արտահայտելով տարբեր իմաստներ՝ ընդդիմության, հանգման, պատճառի, վերաբերության և այլն։ Դեմ կապի դեպքում լրացումը ձևավորվում է անձ ցույց տվող դերանուններով կամ գոյականներով, վրա, համար կապերով ու կապվող բառով արտահայտված լրացման դեպքում կապվող բառը կարող է թե՛ անձ, թե՛ իր ցույց տալ, առթիվ, համար կապերով ձևավորվելիս՝ իբրև կանոն, կապվող բառը իր է ցույց տալիս։

Կատաղել բայի լրացումը նույնպես աչքի է ընկնում դրսևորման բազմազանությամբ։ Այն ևս կարող է արտահայտվել դեմ, վրա, համար, առթիվ և այլ կապերի ու կապվող բառի զուգորդմամբ, ընդ որում, երբ լրացումը ձևավորվում է դեմ, վրա կապերով, կապվող բառը մեծ մասամբ անձ է ցույց տալիս, հաղվադեպ նաև՝ իր։ Համար, առթիվ կապերով ձևավորման դեպքում կապվող բառը հիմնականում իր է մատնանշում, սակավադեպ՝ անձ։ Դեմ և վրա կապերով ձևավորված լրացումները հիմնականում հանգման հարաբերություն են դրսևորում կա՛մ ընդդիմության (դեմ կապի դեպքում), կա՛մ ուղղվածության (վրա կապի ժամանակ) շեշտվածությամբ։

Զարանալ բայը նույնպես աչքի է ընկնում խնդրառական յուրահատկությամբ։ Նրա լրացումը ձևավորվում է մեծ մասամբ դեմ, վրա, համար, մեջ և այլ կապերով՝ դրսևորելով զանազան հարաբերություններ՝ հանգման, ընդդիմության, պատճառականության, ձևի և այլն։ Զարանալ-ի լրացումը հիմնականում անձ է ցույց տալիս, երբ ձևավորվում է դեմ կապով, մյուս դեպքում, իբրև կապվող բառ, կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր մատնանշող բառերը, ընդ որում, վրա կապի գործածության դեպքում գերակշռում են անձ ցույց տվող կապվող բառերը, համար և մեջ կապերի միջոցով ձևավորված լրացման դեպքում՝ իր մատնանշողները։

բ) Կապային խնդրառություն ունեն նաև ծիծաղ, ժպիտ և այլ իմաստ արտահայտող ծիծաղել, ժպտալ, քրքջալ, հռհռալ, խնդալ, չարախնդալ և այլ բայեր։ Նշված բայերի համար առավել հատկանշական է վրա կապով խնդրառությունը։ Հանդիպում են նաև տակ, հետ, նման և այլ կապերով ձևավորված լրացումներ։

Ծիծաղել բայի լրացումը մեծ մասամբ ձևավորվում է վրա կապով՝ արտահայտելով հանգման հարաբերություն։ Ընդ որում, կապվող բառը կարող է թե՛ անձ, թե՛ իր ցույց տալ, և այստեղ որևէ սահմանափակություն չի նկատ-

վում։ Ծիծաղել-ի լրացումը կարող է ձևավորվել նաև տակ, նետ, նամար, նման, պես և այլ կապերով՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ։ Տակ-ը կիրառվում է քիթ, բեղ կապվող բառերի հետ՝ ստեղծելով քթի տակ, բեղի տակ կապակցությունը, որը ծիծաղել բայի համար ձևի պարագայի պաշտոն է կատարում։

Ժպտալ-ը, խնդալ-ը, ճռճռալ-ը, շաբախնդալ-ը, քմծիծաղել-ը ծիծաղել-ի նման պահանջում են վրա, տակ, պես, նման և այլ կապերով ձևավորված լրացումներ, որոնց մեջ իշխողը վրա կապով արտահայտվածներն են, մյուսները մեծ տարածում չունեն։ Վրա, նման, պես կապերով ձևավորվելիս լրացման կապվող բառի դերով կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառերը, տակ-ով ձևավորված կապակցության մեջ կապվող բառը, իբրև կանոն, իր է ցույց տալիս և, իբրև այդպիսին, կիրառում են բեղ և քիթ բառերը, այլ բառերի հետ լրացումը չի ձևավորվում։

Հոգեվիճակային բայերի մի զգալի մասը հավասարապես պահանջում է թե՛ հոլովական, թե՛ կապային խնդրառություն, այսինքն՝ դրանց լրացումները կարող են ստանալ թե՛ կապային, թե՛ հոլովական ձևավորում։ Եվ երկուսն էլ հարազատ են մեր լեզվի ոգուն, հետևաբար և շեղումներ չեն գրական լեզվի նորմաներից։ Միաժամանակ և՛ հոլովական, և՛ կապային խնդրառություն ցուցաբերող բայերը բազմազան են ու բազմաբնույթ։ Հիմք ընդունելով նրանց դրսևորած իմաստները՝ դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի.

ա) Բայեր, որոնք արտահայտում են հոգեկան խանգարում. ինչպես՝ խելագարվել, խելացնորվել, ցնորվել, խենթանալ, խելառվել, գժվել, ուշաթափվել, ուշաբերվել և այլն։

բ) Բայեր, որոնք արտահայտում են լաց, հառաչանք և այլն. ինչպես՝ լալ, լաց լինել, արտասվել, սգալ, սուգ անել, ողբալ, հեկեկալ, հառաչել և այլն։

գ) Բայեր, որոնք արտահայտում են մտահոգություն, տանջանք, տառապանք. ինչպես՝ մտահոգվել, մտատանջվել, տանջվել, տառապել, տվայտել և այլն։

դ) Բայեր, որոնք արտահայտում են վիշտ, տխրություն և այլն. ինչպես՝ վշտանալ, տխրել, թախծել, մռայլվել, ցավել, հրճվել, ուրախանալ և այլն։

ե) Բայեր, որոնք արտահայտում են սիրահարություն, հուզմունք, վրդովմունք, անհանգստություն. ինչպես՝ սիրահարվել, հուզվել, նյարդայնանալ, վրդովվել, գրգռվել, փոթորկվել անհանգստանալ և այլն։

զ) Բայեր, որոնք արտահայտում են զարմանք, տարակուսանք. ինչպես՝ զարմանալ, ապշել, տարակուսել, տատանվել և այլն։

Ինչպես տեսնում ենք, հոգեվիճակային բայերը հետաքրքրական են թե՛ իրենց դրսևորած նշանակությունների և թե՛ խնդիրների ձևավորման տեսակետից։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սեկ., ՈՎՄ—Անահիտ Սեկոյան, Ոսկե վաղերի մեջ, Երևան, 1979։
ՀՍ, Եժ—Համո Սահյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1976։
Մուր., Եժ—Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1952։
ՆՋ, Հ—Նարի Զարյան, Հայաստան, Երևան, 1955։
ՊՋ, Աե—Պերճ Զեյթունցյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977։
ՊՍ, Եժ—Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1, 4, 5, Երևան, 1972—1975։
ՍԽ, ՄՍ—Սերո Խանզադյան, Մխիթար Սպարապետ, Երևան, 1963։
ՏԿ, ՅԿ—Սիլվա Կապուտիկյան, Յոթ կայարաններ, Երևան, 1966։

КЛАССИФИКАЦИЯ ЭМОЦИОНАЛЬНЫХ ГЛАГОЛОВ

АМАЯК ОГАНЯН

Резюме

Эмоциональные глаголы в современном армянском языке интересны, в частности, с точки зрения выражаемых ими значений и управления. По значению эмоциональные глаголы подразделяются на группы, выражающие страх, гнев, радость, волнение, смущение, удивление, брезгливость, гордость, плач, увлеченность и т. д. В зависимости от управления эмоциональные глаголы можно разделить на три группы: а) глаголы, для которых наиболее характерно падежное управление; б) глаголы, по-преимуществу характеризующиеся предложным управлением; в) глаголы, для которых одинаково характерно как падежное, так и предложное управление.